

ՄԱԿ ՓԳՀ

Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատար

Իրավական նկատառումներ օդանավակայանների տարանցիկ տարածքներում կամ «միջազգային» գոտիներում միջազգային պաշտպանություն հայցող անձանց հանդեպ պետության պարտականությունների վերաբերյալ

Ներածություն

1. ՄԱԿ ՓԳՀ-ն տեղյակ է դեպքերի մասին, երբ միջազգային պաշտպանություն հայցող անձինք չեն կարողանում ապաստանի հայց ներկայացնել՝ ժամանելով օդանավակայաններ: Նրանց կանգնեցնում են տարանցիկ տարածքում կամ «միջազգային» գոտում, նախքան հեռացնելը և այն տարածքներն ուղարկելը, որտեղ նրանց կյանքին կամ ազատությանը վտանգ է սպառնում, անկախ նրանից, թե արդյոք այդ անձինք հնարավորություն ունեցել են ներգաղթային աշխատողներին կամ օդանավակայանի այլ պաշտոնատար անձանց հայտնելու այն մասին, որ վերադառնալու դեպքում հետապնդման կամ ծանր վնասի այլ ձևերի ենթարկվելու երկյուղ ունեն: Նրանք ի վիճակի չեն լինում դիմելու ապաստանի համար, ինչպես նաև օգտվելու իրենց՝ միջազգային պաշտպանության կարիքները որոշելու համապատասխան ընթացակարգերից: Ավելին, նրանց համար անհասանելի են տեղեկատվությունը, աջակցությունը, իրավաբանական խորհրդատվությունը կամ ՄԱԿ ՓԳՀ-ն, կամ դրանց հասանելիությունը սահմանափակ է:
2. Այս համատեքստում սույն փաստաթղթում ներկայացված են կարևոր իրավական նկատառումներ, որոնց հիմքում ընկած են ապաստան հայցելու և ապաստանից օգտվելու վերաբերյալ՝ փախստականներին և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերը, չվերադարձելիության սկզբունքը և անկանոն մուտքի համար պատժի բացառման հարցերը: Փաստաթուղթը չի անդրադառնում ապաստանի դիմումներին ընթացք տալու պահանջներին և եղանակներին, այդ թվում՝ օդանավակայաններում գործող ընթացակարգերի միջոցով, երբ միջազգային պաշտպանություն հայցող անձինք կարողացել են ապաստանի հայց ներկայացնել¹: Ինչևէ, այն հատուկ իրավական ուղղորդում է տրամադրում

¹ ՄԱԿ ՓԳՀ, ՄԱԿ ՓԳՀ-ի հայտարարությունը Խասան Սոհամադ Յասինեն ընդդեմ Ռուսաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանում (Դիմում թիվ 3028/16), 1 հունիսի 2016թ. , Դիմում թիվ 3028/16, <http://www.refworld.org/docid/574fe5714.html> :

պետություններին ինքնաթիռով ժամանած անձանց գործնական համատեքստում, որի նպատակն է օգնել պետություններին պատասխանելու այն անձանց, ովքեր ապաստան են հայցում ինքնաթիռից իջնելուն պես՝ նախքան ներգաղթային մուտքի թույլտվություն ստանալու ընթացակարգերով անցնելը:

Ապաստանի իրավունքը և չվերադարձելիության սկզբունքը

3. Միջազգային իրավունքի համաձայն՝ պետություններն օտարերկրացիների մուտքը կարգավորելու անկախ լիազորություն ունեն: Ինչևէ, միջազգային իրավունքով նաև նախատեսված է, որ նմանօրինակ միջոցները չեն կարող արգելել օտարերկրացիներին հետապնդումից պաշտպանվելու նպատակով ապաստան հայցել և օգտվել ապաստանից²: Ապաստան հայցելու և ապաստանից օգտվելու իրավունքը ամրագրված է տարբեր տարածաշրջանային իրավական գործիքներում³ և մասամբ իրացվում է պետությունների՝ Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի ՄԱԿ կոնվենցիայի (1951թ. Կոնվենցիա)⁴ և դրա 1967 թվականի Արձանագրության⁵, ինչպես նաև փախստականներին առնչվող տարածաշրջանային իրավական գործիքների⁶ համաձայն փախստականներին

² Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 14-րդ հոդվածը սահմանում է, որ «յուրաքանչյուր անձ հետապնդումից պաշտպանվելու համար այլ երկրներում ապաստան հայցելու և ապաստանից օգտվելու իրավունք ունի»:

³ Ամերիկյան պետությունների կազմակերպություն, Ամերիկյան հռչակագիր մարդու իրավունքների և պարտականությունների մասին, 2 մայիսի 1948թ. , Հոդված XXVII, <http://www.unhcr.org/refworld/docid/3ae6b3710.html> , որը վերաբերում է ապաստան հայցելու և ստանալու իրավունքին: Ամերիկյան պետությունների կազմակերպություն, Ամերիկյան կոնվենցիա մարդու իրավունքների մասին, «Ման Խոսեի դաշնագիր», Կոստա Ռիկա, 22 նոյեմբերի 1969թ. , Հոդված 22(7), <http://www.unhcr.org/refworld/docid/3ae6b36510.html> , որը վերաբերում է ապաստան հայցելու և ապաստան շնորհելու իրավունքին: Մարդու և ժողովուրդների իրավունքների մասին աֆրիկյան խարտիա («Բանջուլի խարտիա»), 27 հունիսի 1981թ. , CAB/LEG/67/3 վերանայված 5, 21 I.L.M. 58 (1982), Հոդված 12(3), <http://www.refworld.org/docid/3ae6b3630.html> , որը վերաբերում է ապաստան հայցելու և ձեռք բերելու իրավունքին: Եվրոպական միություն, Հիմնարար իրավունքների մասին Եվրոպական միության խարտիա, 26 հոկտեմբերի 2012թ. , 2012/C 326/02, Հոդված 18, <http://www.refworld.org/docid/3ae6b3b70.html> (Հիմնարար իրավունքների մասին ԵՄ Խարտիա), որը վերաբերում է ապաստանի իրավունքին, որը պետք է երաշխավորված լինի՝ հարգելով 1951 թվականի Կոնվենցիան և ԵՄ օրենքը:

⁴ Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա (28 հուլիսի 1951թ.) 189 UNTS 137 (1951թ. Կոնվենցիա), <http://www.refworld.org/docid/3be01b964.html> :

⁵ Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի արձանագրություն (31 հունվարի 1967թ.) 606 UNTS 267 (1967թ. Արձանագրություն), <http://www.refworld.org/docid/3ae6b3ae4.html> :

⁶ ԱՄԿ Աֆրիկայում փախստականների հատուկ հիմնախնդիրները կարգավորող կոնվենցիա (10 սեպտեմբերի 1969թ.) 1001 UNTS 45, Հոդված II, (1969թ. ԱՄԿ Կոնվենցիա) <http://www.refworld.org/docid/3ae6b36018.html> : Կարթագենյան հռչակագիր փախստականների մասին,

միջազգային պաշտպանություն տրամադրելու պարտավորությունների միջոցով:

4. Ապաստան հայցելու և ապաստանից օգտվելու իրավունքի համար կարևոր նշանակություն ունի չվերադարձելիության սկզբունքը, որն արգելում է անխտիր⁷ բոլոր պետություններին դրսևորել այնպիսի վարքագիծ, որը «որևէ կերպ հանգեցնում է վերադարձին» դեպի անապահով օտարերկրյա տարածք. նման վարքագիծը ներառում է մերժումը սահմանին կամ երկրի տարածք չընդունելը⁸: Չվերադարձելիության սկզբունքը, որը ամենից հստակ արտահայտված է 1951 թվականի Կոնվենցիայի 33-րդ հոդվածում, ճանաչվել է որպես միջազգային սովորույթային իրավունքի նորմ⁹: Չվերադարձելիության սկզբունքն արգելում է պետություններին փախստականին արտաքսել կամ որևէ կերպ վերադարձնել մի տարածք, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ: Չվերադարձելիության հետ կապված պարտավորությունները նաև նախատեսված են փախստականներին առնչվող տարածաշրջանային իրավական գործիքներով¹⁰ և ամրագրված են մարդու իրավունքներին առնչվող միջազգային և տարածաշրջանային իրավական գործիքներում¹¹:

Գիտաժողով Կենտրոնական Ամերիկայում, Մեքսիկայում և Պանամայում փախստականների միջազգային պաշտպանության մասին, 22 նոյեմբերի 1984թ., Եզրակացություն III(4), (1984թ. Կարթագենյան հռչակագիր) <http://www.refworld.org/docid/3ae6b36ec.html> :

⁷ Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. կոնվենցիայի /վերոնշյալ ծանոթագրություն 3/ 3-րդ հոդվածի համաձայն՝ «Կոնվենցիայի անդամ պետությունները պետք է կիրառեն սույն Կոնվենցիայի դրույթները փախստականների նկատմամբ՝ առանց խտրականության՝ անկախ ռասայական պատկանելությունից, կրոնից կամ ծագման երկրից»:

⁸ Գործադիր կոմիտեի Եզրակացություն թիվ 6 (XXVIII), 1977, պարբ. (գ); Գործադիր կոմիտեի Եզրակացություն թիվ 22 (XXXII), 1981, պարբ. II.Ա.2; Գործադիր կոմիտեի Եզրակացություն թիվ 81 (XLVIII), 1997, պարբ. (ը); Գործադիր կոմիտեի Եզրակացություն թիվ 82 (XLVIII), 1997, պարբ. (դ)(ii); Գործադիր կոմիտեի Եզրակացություն թիվ 85 (XLIX), 1998, պարբ. (ձ):

⁹ Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի Կոնվենցիայի և/կամ դրա 1967 թվականի Արձանագրության անդամ պետությունների հռչակագիր, 16 հունվարի 2002թ., HCR/MMSP/2001/09, պարբ. 4, <http://www.unhcr.org/refworld/docid/3d60f5557.html> : ՄԱԿ ՓԳՀ, ՄԱԿ ՓԳՀ միջամտությունը Հոնկոնգի Հատուկ վարչական շրջանի Վերջին բողոքարկման վերաքննիչ դատարանում՝ Ս, ԿՄՖ, ԲՖ (Դիմողներ) ընդդեմ Ներգաղթի տնօրենի, Անվտանգության քարտուղարի (Պատասխանող կողմ) գործով, 31 հունվարի 2013թ., Քաղաքացիական բողոքներ թիվ 18, 19 և 20՝ 2011թ., որտեղ տրված է համապարփակ հիմնավորում, և ներկայացված է աղբյուրների ցանկը 28-71 պարբերություններում, <http://www.refworld.org/docid/510a74ce2.html> :

¹⁰ Տես Ամերիկյան պետությունների կազմակերպություն, Ամերիկյան կոնվենցիա մարդու իրավունքների մասին /վերոնշյալ ծանոթագրություն 2/, Հոդված 22(8), և 1984թ. Կարթագենյան հռչակագիր /վերոնշյալ ծանոթագրություն 5/, Եզրակացություն III.5, որտեղ կրկին ընդգծվում է չվերադարձելիության սկզբունքի կարևորությունը և այն որպես պարտադիր նորմ ճանաչելու և դրան հետևելու անհրաժեշտությունը:

¹¹ Ընդհանուր տեղեկությունների համար տես ՄԱԿ ՓԳՀ, Խորհրդատվական կարծիք Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայով և դրա 1967 թվականի Արձանագրությամբ

5. Պետությունները պատասխանատու են վերադարձելիությունից բոլոր այն անձանց պաշտպանելու համար, ովքեր գտնվում են իրենց իրավասության ներքո, այդ թվում՝ երբ անձը գտնվում է տվյալ պետության տարածքում¹²: «Տարածք» տերմինը ներառում է պետության հողային տարածքը և դրա

սահմանված չվերադարձելիության հետ կապված պարտավորությունների արտատարածքային կիրառության վերաբերյալ, 26 հունվարի 2007թ. , Մաս Բ, <http://www.refworld.org/docid/45f17a1a4.html> , որտեղ վկայակոչվում են մարդու իրավունքներին առնչվող տարբեր իրավական գործիքներ, այդ թվում՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, 16 դեկտեմբերի 1966թ. , 999 UNTS 171, Հոդվածներ 6 և 7; Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա, 10 դեկտեմբերի 1984թ. , 1465 UNTS 85, Հոդված 3; Մարդու իրավունքների մասին 1969թ. ամերիկյան կոնվենցիա /վերոնշյալ ծանոթագրություն 2/, Հոդված 22(8); Բանջուրի խարտիա /վերոնշյալ ծանոթագրություն 2/, Հոդված 5; Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, որը բարեփոխվել է թիվ 11 և 14 արձանագրություններով, 4 նոյեմբերի 1950թ. , ETS 5, Հոդվածներ 2 և 3: Տես նաև Հիմնարար իրավունքների մասին ԵՄ խարտիա /վերոնշյալ ծանոթագրություն 2/, Հոդված 19(2):

¹² ՄԱԿ ՓԳՀ, Խորհրդատվական կարծիք Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայով և դրա 1967 թվականի Արձանագրությամբ սահմանված չվերադարձելիության հետ կապված պարտավորությունների արտատարածքային կիրառության վերաբերյալ, 26 հունվարի 2007թ. , պարբ. 9 և 20, <http://www.unhcr.org/refworld/docid/45f17a1a4.html> : Չվերադարձելիության սկզբունքը նաև կիրառվում է արտատարածքային կերպով, այն է՝ երբ խնդրո առարկա պետությունը գործում է իր տարածքից դուրս և արդյունավետ վերահսկողություն ունի անձի նկատմամբ: Տես ՄԱԿ ՓԳՀ, ՄԱԿ ՓԳՀ-ի բանավոր միջամտությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում – Հիրսին և մյուսներն ընդդեմ Իտալիայի գործով դատական նիստ, 22 հունիսի 2011թ. , Դիմում թիվ 27765/09, <http://www.refworld.org/docid/4e0356d42.html> : ՄԱԿ ՓԳՀ, Խորհրդատվական կարծիք Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայով և դրա 1967 թվականի Արձանագրությամբ սահմանված չվերադարձելիության հետ կապված պարտավորությունների արտատարածքային կիրառության վերաբերյալ, 26 հունվարի 2007թ. , պարբ. 24, 26, 32-43, <http://www.unhcr.org/refworld/docid/45f17a1a4.html> ; ՄԱԿ ՓԳՀ, Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի միջամտությունը Հիրսին և մյուսներն ընդդեմ Իտալիայի գործով, 2010թ. մարտ, պարբ. 4.1.1-4.2.3, <http://www.unhcr.org/refworld/docid/4b97778d2.html> : ՄԱԿ ՓԳՀ, ՄԱԿ ՓԳՀ-ի հայտարարությունները Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանին Մերկոսուրի (Հարավային Ամերիկայի երկրների ընդհանուր շուկա) կողմից ներկայացված՝ Միգրանտ երեխաների վերաբերյալ խորհրդատվական կարծիքի խնդրանքի շրջանակում, 17 փետրվարի 2012թ. , պարբ. 2(4), <http://www.refworld.org/docid/4f4c959f2.html> : ՄԱԿ Մարդու իրավունքների հանձնաժողովի Ընդհանուր մեկնաբանություն թիվ 31, Դաշնագրի անդամ պետությունների ընդհանուր իրավական պարտավորությունների բնույթը, CCPR/C/21/Rev.1/Add.13, պարբ. 10, <http://www.refworld.org/docid/478b26ae2.html> : Տես նաև՝ Խորհրդատվական կարծիք գրաված պաղեստինյան տարածքում պատի կառուցման իրավական հետևանքների մասին, Արդարադատության միջազգային դատարան (ԱՄԴ), 9 հուլիսի 2004թ. , պարբ. 109-ից 113, <http://www.refworld.org/cases.ICJ.414ad9a719.html> , համաձայն որի՝ պետությունները պարտավոր են կատարել մարդու իրավունքներին առնչվող իրենց միջազգային պարտավորությունները արդարադատություն իրականացնելիս: Խորհրդատվական կարծիք OC21/14, «Միգրացիայի համատեքստում գտնվող և/կամ միջազգային պաշտպանության կարիք ունեցող երեխաների իրավունքներն ու երաշխիքները», OC21/14, Մարդու իրավունքների միջամերիկյան դատարան (ՄԻՄԱԴ), 19 օգոստոսի 2014թ. , պարբ. 61, <http://www.refworld.org/cases.IACRTHR.54129c854.html> :

**UNHCR**United Nations High Commissioner for Refugees
Haut Commissariat des Nations Unies pour les réfugiés

տարածքային ջրերը, ինչպես նաև դրա դե յուրե սահմանային անցակետերը, այդ թվում՝ տարանցիկ տարածքները կամ «միջազգային» գոտիները օդանավակայաններում¹³: Պետությունը պարտավոր է պաշտպանել անձին վերադարձելիությունից անկախ նրանից, թե այդ անձը երկիր մուտք է գործել օրինական ճանապարհով և անցել է ներգաղթային վերահսկողությունը, մուտք գործելու թույլտվություն ունեցել է, թե գտնվում է օդանավակայանի տարանցիկ տարածքում կամ «միջազգային» գոտում¹⁴: Պետությունները չեն կարող ազատվել չվերադարձելիության հետ կապված իրենց պարտավորություններից իրենց ներքին (ներգաղթային կամ սահմանային վերահսկողության) օրենքների դրույթների կամ իրենց տարածքից որոշ հատվածներ ապաստանին առնչվող նպատակներով անջատելու միջոցով¹⁵: Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թվականի կոնվենցիայի¹⁶ 27-րդ հոդվածը սահմանում է միջազգային իրավունքի այն սկզբունքը, ըստ որի՝ պետությունը չի կարող իր օրենսդրությունը վկայակոչել որպես իր միջազգային իրավական պարտավորությունները չկատարելու հիմք կամ արդարացում¹⁷:

¹³ Տես I Brownlie, *Principles of Public International Law* (OUP 1998), 105 and 116-118:

¹⁴ Ամուուրն ընդդեմ Ֆրանսիայի, 17/1995/523/609, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 25 հունիսի 1996թ. , <http://www.refworld.org/cases/ECHR.3ae6b76710.html> : 52-րդ պարբերության մեջ Դատարանը նշում է, որ «նույնիսկ չնայած դիմողները Ֆրանսիայում չեն եղել 1945 թվականի նոյեմբերի 2-ի Հրամանի իմաստով, նրանց Փարիզի Օրվի օդանավակայանի միջազգային գոտում կանգնեցնելը նրանց դարձրել է Ֆրանսիայի օրենքին ենթակա», և գտել է, որ չնայած իր անվանը՝ միջազգային գոտին չունի արտատարածքային կարգավիճակ: Տես նաև Դ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործը, 146/1996/767/964, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2 մայիսի 1997թ. , պարբ. 48 պարբ. 25-ի հետ միասին, <http://www.refworld.org/docid/46deb3452.html> :

¹⁵ ՄԱԿ ՓԳՀ, Տեղեկատվություն Եվրոպական հանձնաժողովից՝ ապօրինի ներգաղթի վերաբերյալ ընդհանուր քաղաքականության մասին (COM(2001) 672 վերջնական): ՄԱԿ ՓԳՀ-ի Դիտարկումները, 1 հուլիսի 2002թ. , պարբ. 12, <http://www.refworld.org/docid/3d57e5c34.html> : Տես նաև ՄԱԿ Գլխավոր Ասամբլեա, Առաջարկվող սկզբունքներ և ուղեցույց կանոններ միջազգային սահմանին մարդու իրավունքների վերաբերյալ. գիտաժողովի փաստաթուղթ, 23 հուլիսի 2014թ. , A/69/CRP. 1, պարբ. 1, <http://www.refworld.org/docid/54b8f58b4.html> , որտեղ նշված է, որ «միջազգային գոտիները բացառման կամ մարդու իրավունքների հետ կապված պարտավորությունների հարցում բացառությունների գոտիներ չեն»:

¹⁶ Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիա, 23 մայիսի 1969թ. , 1155 UNTS 331 <http://www.refworld.org/docid/3ae6b3a10.html> :

¹⁷ Տես G S Goodwin-Gill and J McAdam, *The Refugee in International Law* (OUP 2007) 253. ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հանձնաժողով (ԵԻՀ), Ընդհանուր մեկնաբանություն թիվ 6 (2005): Առանց չափահասի ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների հանդեպ վերաբերմունքը նրանց ծագման երկրից դուրս, 1 սեպտեմբերի 2005թ. , CRC/GC/2005/6, պարբ. 12, <http://www.refworld.org/docid/42dd174b4.html> , որտեղ Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայի առնչությամբ նշված է, որ «պետության պարտավորությունները չեն կարող կամայականորեն և միակողմանիորեն սահմանափակվել գոտիներ կամ տարածքներ պետության տարածքից բացառելով կամ որոշակի գոտիներ կամ տարածքներ սահմանելով որպես պետության իրավասության ներքո չգտնվող կամ մասամբ գտնվող»:



UNHCR

United Nations High Commissioner for Refugees
Haut Commissariat des Nations Unies pour les réfugiés

6. Իրենց միջազգային իրավական պարտականությունները (այդ թվում՝ ապաստան հայցելուն և ապաստանից օգտվելուն, ինչպես նաև չվերադարձելիության սկզբունքին առնչվող) իրականացնելու համար պետությունները պարտավորություն ունեն իրենց տարածք ժամանած և օդանավակայանի տարանցիկ տարածքում կամ «միջազգային» գոտում կանգնեցված անձանց առջև, որն է՝ անկախ հարցումներ անել այդ անձանց միջազգային պաշտպանության կարիքների մասին և այնպես անել, որ նրանք չհայտնվեն վերադարձելիության վտանգի տակ¹⁸: Այսպես պատահում է հատկապես այն դեպքում, երբ պետությունները գիտեն, կամ տրամաբանորեն ակնկալվում է, որ պետք է իմանան այն ռիսկերը, որոնք առաջ են գալիս, երբ

Խորհրդատվական կարծիք OC-21/14, «Միգրացիայի համատեքստում գտնվող կամ միջազգային պաշտպանության կարիք ունեցող երեխաների իրավունքներն ու/կամ երաշխիքները», OC-21/14, Մարդու իրավունքների միջամերիկյան դատարան (ՄԻՄԱԴ), պարբ. 220, 19 օգոստոսի 2014թ. , <http://www.refworld.org/cases,IACRTHR,54129c854.html> , որտեղ չվերադարձելիության հետ կապված պարտավորությունների ավելի լայն համատեքստում մեջբերվում է ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հանձնաժողովի վերոնշյալ Թիվ 6 Ընդհանուր մեկնաբանությունը:

¹⁸ ՄԱԿ ՓԳՀ, ՄԱԿ ՓԳՀ միջամտությունը Հոնկոնգի Հատուկ վարչական շրջանի Վերջին բողոքարկման վերաբնիչ դատարանում՝ Ս, ԿՄՖ, ԲՖ (Դիմողներ) ընդդեմ Ներգաղթի տնօրենի, Անվտանգության քարտուղարի (Պատասխանող կողմ) գործով, 31 հունվարի 2013թ. , 2011 թվականի Քաղաքացիական բողոքներ թիվ 18, 19 և 20, պարբ. 74-75, <http://www.refworld.org/docid/510a74ce2.html> : «Անկախ հարցումների պարտականությունը» ճանաչվել է տարբեր դատարանների կողմից. Հիբսի Ջամասան և մյուսներն ընդդեմ Իտալիայի, Դիմում թիվ 27765/09, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 23 փետրվարի 2012թ. , պարբ. 146-148, <http://www.refworld.org/docid/4f4507942.html> ; Մ. Ս. Ս. ընդդեմ Բելգիայի և Հունաստանի, Դիմում թիվ 30696/09, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 21 հունվարի 2011թ. , պարբ. 286,298,315,321,359, <http://www.refworld.org/docid/4d39bc7f2.html> ; Ռեջինան ընդդեմ Պրահայի օդանավակայանի ներգաղթային աշխատակցի և մեկ ուրիշի; միայն Գնչունների իրավունքների եվրոպական կենտրոնի և մյուսների մասնակցությամբ գործը, [2004] UKHL 55, Միացյալ թագավորություն. Լորդերի պալատ (Դատական հանձնաժողով), 9 դեկտեմբերի 2004թ. , պարբ. 26, <http://www.refworld.org/docid/41c17ebf4.html> ; 2011 թվականի Վերջնական բողոքներ թիվ 18, 19 և 20 (Քաղաքացիական) Ս. , ԿՄՖ, ԲՖ (Դիմողներ) և Ներգաղթի տնօրենի, Անվտանգության քարտուղարի (Պատասխանող կողմ) և Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (Միջամտող) միջև, Հոնկոնգ. Վերջին բողոքարկման վերաբնիչ դատարան, 25 մարտի 2013թ. , պարբ. 56, 64, <http://www.refworld.org/docid/515010a52.html> . Եվրոպական միություն. Եվրոպական միության խորհուրդ, Եվրոպական խորհրդարանի և խորհրդի 2013 թվականի հունիսի 26-ի Դիրեկտիվ 2013/32/EU միջազգային պաշտպանություն տրամադրելու և հետ վերցնելու ընդհանուր ընթացակարգերի մասին (փոփոխություններով), 29 հունիսի 2013թ. , OJ L. 180/60 -180/95; 29.6.2013, 2013/32/EU, <http://www.refworld.org/docid/51d29b224.html> , Հոդված 6(1), 3-րդ պարբերություն. «Անդամ պետություններն ապահովում են, որ մյուս մարմինները, որոնց ամենայն հավանականությամբ կարող են դիմել միջազգային պաշտպանություն հայցող անձինք, ինչպես օրինակ՝ ոստիկանությունը, սահմանապահները, ներգաղթային մարմինները և կալանքի վայրերի անձնակազմը, համապատասխան տեղեկություններ ունենան, և որ նրանց անձնակազմը իր խնդիրներին և պարտականություններին համապատասխան՝ անհրաժեշտ մակարդակի վերապատրաստում անցնի և ցուցումներ ստանա՝ տեղեկացնելու դիմողներին, թե ուր կամ ինչպես պետք է ներկայացվեն միջազգային պաշտպանության դիմումները»:

անձինք վերադարձվում են¹⁹: Գոյություն չունի կոնկրետ մի բանաձև կամ արտահայտություն, որի միջոցով միջազգային պաշտպանություն հայցելու ցանկությունը պետք է արտահայտվի²⁰: Այս իմաստով պետությունները պետք է այնպես անեն, որ բոլոր համապատասխան պաշտոնատար անձինք, այդ թվում՝ ներգաղթային աշխատակիցները և սահմանապահները, ուժեր, հնարավոր է, շփում ունենան միջազգային պաշտպանություն հայցող անձանց հետ, «հստակ հրահանգներ ունենան այն մասին, թե ինչպես վարվել այնպիսի դեպքերում, որոնք կարող են գտնվել համապատասխան միջազգային գործիքների իրավասության շրջանակում»²¹, և ուղղորդեն նրանց դեպի ապաստանի հարցերով զբաղվող համապատասխան մարմինները²²:

7. Նախևառաջ միջազգային պաշտպանություն հայցող անձանց համար պետք է հասանելի լինի համապատասխան տեղեկատվություն նրանց համար հասկանալի լեզվով, և նրանք պետք է կարողանան պաշտոնական ապաստանի հայց ներկայացնել իրավասու մարմնին: Այնուհետև միջազգային պաշտպանություն հայցող անձանց պետք է տրվի ՄԱԿ ՓԳՀ-ի հետ կապվելու հնարավորություն: Միննույն ժամանակ, համաձայն իր լիազորագրի²³, ՄԱԿ

¹⁹ Հիրսի Ջաման և մյուսներն ընդդեմ Իտալիայի, Դիմում թիվ 27765/09, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 23 փետրվարի 2012թ., պարբ. 157, <http://www.refworld.org/cases,ECHR,4f4507942.html> : Շարիֆին և մյուսներն ընդդեմ Իտալիայի և Հունաստանի, Դիմում թիվ 16643/09, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 21 հոկտեմբերի 2014թ., <http://www.refworld.org/cases,ECHR,544617ad4.html> :

²⁰ Գոյություն չունի որևէ կոնկրետ բանաձև կամ արտահայտություն, որի միջոցով պետք է արտահայտվի ապաստան հայցելու ցանկությունը: Տես՝ ՄԱԿ ՓԳՀ, ՄԱԿ ՓԳՀ բանավոր միջամտությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում՝ Հիրսին և մյուսներն ընդդեմ Իտալիայի գործով դատական նիստի ժամանակ, 22 հունիսի 2011թ., Դիմում թիվ 27765/09, <http://www.refworld.org/docid/4e0356d42.html> : Առաջարկվում է, որ պետությունները սկսեն միջազգային սահմանին սկրինինգի և ուղղորդման գործընթացներ, որպեսզի ապահովեն, որ այն մարդիկ, ուժեր փորձում են մուտք գործել և գտնվում են վտանգի տակ, ճանաչվեն և դեպի համապատասխան մարմին ուղղորդվեն: Տես ՄԱԿ Գլխավոր ասամբլեա, Առաջարկվող սկզբունքներ և ուղեցույց կանոններ միջազգային սահմանին մարդու իրավունքների վերաբերյալ. գիտաժողովի փաստաթուղթ, 23 հուլիսի 2014թ., A/69/CRP. 1, Ուղեցույց 6, պարբ. 1, <http://www.refworld.org/docid/54b8f58b4.html> :

²¹ Գործադիր կոմիտեի Եզրակացություն թիվ 8 (XXVIII), 1977, պարբ. (ե)(i):

²² Նույն տեղում: Տես նաև՝ Գործադիր կոմիտեի Եզրակացություն թիվ 81 (XLVIII), 1997, պարբ. (ը); Գործադիր կոմիտեի Եզրակացություն թիվ 82 (XLVIII), 1997, պարբ. (դ)(ii) և (iii); Գործադիր կոմիտեի Եզրակացություն թիվ 85 (XLIX), 1998, պարբ. (ձ): Տես նաև՝ ՄԱԿ Գլխավոր ասամբլեա, Առաջարկվող սկզբունքներ և ուղեցույց կանոններ միջազգային սահմանին մարդու իրավունքների վերաբերյալ. գիտաժողովի փաստաթուղթ, 23 հուլիսի 2014թ., A/69/CRP. 1, Ուղեցույց 7, պարբ. 5, <http://www.refworld.org/docid/54b8f58b4.html> : Տես նաև՝ Պաշտոնի Տնօրեն ընտանիքն ընդդեմ Բուլղարիայի Բազմազգ Հանրապետության գործը, Մարդու իրավունքների միջամերիկյան դատարան (ՄԻՄԱԴ), 25 նոյեմբերի 2013թ., <http://www.refworld.org/cases,IACRTHR,52c53b154.html> :

²³ ՄԱԿ Գլխավոր ասամբլեա, Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով զբաղվող հանձնակատարի գրասենյակի կանոնադրություն, 14 դեկտեմբերի 1950թ., A/RES/428(V), հասանելի է հետևյալ հասցեով՝ <http://www.refworld.org/docid/3ae6b3628.html> : ՄԱԿ ՓԳՀ,

ՓԳՀ-ի համար պետք է հնարավորություն ընձեռնվի կապվելու նման անձանց հետ և այցելելու նրանց, այդ թվում՝ օդանավակայանների տարանցիկ տարածքներում կամ «միջազգային» գոտիներում՝ նրանց վիճակը գնահատելու և նրանց բարօրությանը հետևելու, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում նրանց աջակցություն տրամադրելու համար²⁴: Այս երաշխիքները հատկապես կարևոր են, երբ միջազգային պաշտպանություն հայցող անձինք գտնվում են օդանավակայանների տարանցիկ տարածքներում կամ «միջազգային» գոտիներում, նրանց առանձնահատուկ խոցելիության և ապաստանի տրամադրման արդար ու արդյունավետ ընթացակարգի հասանելիության մերժման վտանգի պատճառով: Ըստ տրամաբանության՝ հնարավոր է, որ մարդիկ վախենան հավաքական վերադարձից և դիտարկեն տարանցիկ տարածքները կամ «միջազգային» գոտիները որպես ոչ պատշաճ կամ անբարենպաստ վայրեր միջազգային պաշտպանության կարիք արտահայտելու համար²⁵:

Անկանոն մուտքի համար պատժի բացառումը

8. Միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձինք հաճախ ստիպված են ժամանել կամ մուտք գործել երկիր առանց պահանջվող փաստաթղթերի կամ մուտքի՝ նախօրոք ձեռք բերված թույլտվության: Ծանոթ լինելով փախստականների փախուստի իրավիճակներին²⁶՝ 1951 թվականի

Ծանոթագրություն Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի և նրա գրասենյակի լիազորագրի մասին, 2013 թվականի հոկտեմբեր, <http://www.refworld.org/docid/5268c9474.html> :

²⁴ Գործադիր կոմիտեի եզրակացություն թիվ 22 (XXXII), 1981, պարբ. III: Գործադիր կոմիտեի եզրակացություն թիվ 33 (XXXV), 1984, պարբ. (ը): Գործադիր կոմիտեի եզրակացություն թիվ 72 (XLIV), 1993, պարբ. (բ): Գործադիր կոմիտեի եզրակացություն թիվ 73 (XLIV), 1993, պարբ. (b) (iii): Գործադիր կոմիտեի եզրակացություն թիվ 79 (XLVII), 1996, պարբ. (ւ): Տես նաև Ծանոթագրություն Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի և նրա գրասենյակի լիազորագրի մասին, 2013 թվականի հոկտեմբեր, էջ 7, <http://www.refworld.org/docid/5268c9474.html> , որտեղ սահմանվում է ՄԱԿ ՓԳՀ լիազորությունների շրջանակը:

²⁵ ՄԱԿ ՓԳՀ, Ամփոփիչ եզրակացություններ ապօրինի մուտքի կամ ներկայության համար պատժի բացառման վերաբերյալ. Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի ՄԱԿ Կոնվենցիայի 31-րդ հոդվածի մեկնաբանությունը և կիրառությունը, 15 մարտի 2017թ. , Կլոր սեղան, պարբ. 17, <http://www.refworld.org/docid/5b18f6740.html> :

²⁶ Ըստ 1951 թվականի Կոնվենցիայի հեղինակների՝ «փախստականը, ում մեկնումն իր ծագման երկրից սովորաբար փախուստ է, հազվադեպ է այնպիսի վիճակում գտնվում, որ համապատասխանի ապաստանի երկիր օրինական մուտքի պահանջներին (ազգային անձնագիր և վիզա ունենալը)»: Տես՝ ՄԱԿ-ի Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով ժամանակավոր հանձնաժողով, ՄԱԿ-ի Ապաքաղաքացիության և դրան առնչվող հարցերով ժամանակավոր հանձնաժողով, Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակը – Գլխավոր քարտուղարի հուշագիր, 3 հունվարի 1950թ. , E/AC.32/2, Հոդված 24-ի մեկնաբանություն-պարբերություն 2, <http://www.refworld.org/docid/3ae68c280.html> : Տես նաև՝ Գործադիր կոմիտեի

**UNHCR**United Nations High Commissioner for Refugees
Haut Commissariat des Nations Unies pour les réfugiés

Կոնվենցիայի 31(1)-րդ հոդվածն արգելում է ապօրինի մուտքի կամ ներկայության համար պատիժ կիրառել այն փախստականների նկատմամբ, ովքեր, անմիջապես գալով մի տարածքից, որտեղ նրանք վախենում են ենթարկվել հետապնդման, մուտք են գործում կամ գտնվում երկրի տարածքում առանց թույլտվության, եթե նրանք անհապաղ ներկայանում են համապատասխան մարմիններ և ցույց են տալիս, որ իրենց չթույլատրված մուտքը կամ ներկայությունը հիմնավոր պատճառ ունի: 1951 թվականի Կոնվենցիայի 31(1)-րդ հոդվածը կիրառվում է ինչպես փախստականների, այնպես էլ ապաստան հայցողների նկատմամբ: Որպեսզի 31(1)-րդ հոդվածը արդյունավետ լինի, այն պետք է կիրառվի ցանկացած անձի նկատմամբ, ով հայտնում է, որ ունի միջազգային պաշտպանության կարիք, քանի դեռ չի ապացուցվել հակառակը, և այդ անձին չի տրվել արդար ընթացակարգին հաջորդող վերջնական որոշում²⁷: «Պատիժ» բառը լայն իմաստ ունի, այն չի սահմանափակվում քրեական պատժով, այլ ներառում է ցանկացած վարչական պատժամիջոց կամ ընթացակարգային վնաս, որին ենթարկվում է միջազգային պաշտպանություն հայցող անձը²⁸: Հրաժարվել թույլ տալ միջազգային պաշտպանություն հայցող անձին, ով մուտք է գործել երկիր առանց թույլտվության, ապաստանի դիմում ներկայացնել, խանգարել նրան օգտվել ապաստանի տրամադրման ընթացակարգից կամ հետաձգել դրա հասանելիությունը և անձին պահել օդանավակայանի տարանցիկ տարածքում կամ «միջազգային» գոտում՝ կարող է հավասարազոր լինել պատժի և հակասել 1951 թվականի Կոնվենցիայի 31(1)-րդ հոդվածին²⁹:

Եզրակացություն թիվ 58 (XL), 1989, պարբ. (i), որտեղ վկայակոչվում է այն հանգամանքը, որ փախստականները ստիպված են լինում օգտագործել կեղծ փաստաթղթեր:

²⁷ ՄԱԿ ՓԳՀ, Անփոփիչ եզրակացություններ Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 31-րդ հոդվածի վերաբերյալ – վերանայված տարբերակ (Ժնևի Փորձագետների կլոր սեղան, 8-9 նոյեմբերի 2001թ.) [Համաշխարհային խորհրդատվություններ միջազգային պաշտպանության վերաբերյալ/Երկրորդ փուլ], 9 նոյեմբերի 2001թ., պարբ. 10(է), <http://www.refworld.org/docid/470a33b20.html> : Տես նաև Cathryn Costello (with Yulia Ioffe and Teresa Büchsel), Article 31 of the 1951 Convention Relating to the Status of Refugees, July 2017, PPLA/2017/01, p. 15, <http://www.refworld.org/docid/59ad55c24.html> (“Costello et al”): Կարելի է նաև վկայակոչել փախստականի կարգավիճակի հռչակագրային բնույթը, տես ՄԱԿ ՓԳՀ, Ձեռնարկ և ուղեցույց Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի և դրա 1967 թվականի Արձանագրության համաձայն փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգերի և չափանիշների մասին, 2011թ. դեկտեմբեր, HCR/IP/4/ENG/REV. 3, պարբ. 28, <http://www.refworld.org/docid/4f33c8d92.html> :

²⁸ Տես Costello et al /վերոնշյալ ծանոթագրություն 26/, էջ 33, որտեղ նաև վկայակոչվում է B010 ընդդեմ Կանադայի (Քաղաքացիություն և ներգաղթ) գործը, 2015 SCC 58, Կանադա. Գերագույն դատարան, 27 նոյեմբերի 2015թ., http://www.refworld.org/cases.CAN_SC.56603be94.html :

²⁹ B010 ընդդեմ Կանադայի (Քաղաքացիություն և ներգաղթ) գործը, 2015 SCC 58, Կանադա. Գերագույն դատարան, 27 նոյեմբերի 2015թ., պարբ. 57, http://www.refworld.org/cases.CAN_SC.56603be94.html :



UNHCR

United Nations High Commissioner for Refugees
Haut Commissariat des Nations Unies pour les réfugiés

Եզրակացություն

9. Պետությունները պետք է կատարեն իրենց՝ փախստականներին և մարդու իրավունքներին առնչվող իրավական նորմերով սահմանված իրավական պարտավորությունները, երբ միջազգային պաշտպանություն հայցող անձինք ժամանում են օդանավակայաններ, այդ թվում՝ տարանցիկ տարածքներ կամ «միջազգային» գոտիներ: Պետությունները չպետք է նման անձանց պահեն տարանցիկ տարածքներում կամ «միջազգային» գոտիներում, այլ պետք է ուղղորդեն նրանց դեպի ապաստանի հարցերով զբաղվող իրավասու մարմիններ և ապաստանի հայց ներկայացնելու հնարավորություն տան՝ թույլ տալով նրանց օգտվել իրենց կարգավիճակը և պաշտպանության կարիքները որոշելուն ուղղված արդար և արդյունավետ ընթացակարգերից: Այսպես չվարվելը հակասում է ապաստան հայցելու իրավունքին, չվերադարձելիության սկզբունքին, ինչպես նաև չթույլատրված մուտքի և ներկայության համար փախստականներին չպատժելու սկզբունքին:

ՄԱԿ ՓԳՀ

Միջազգային պաշտպանության բաժին

17 հունվարի 2019թ.